ԴԵՄՈԿՐԱՏԻԱՅԻ ՑԻՎԻԼԻԱՐԽԻԿ ՉԱՓՄԱՆ ՄԱՍԻՆ

ԱՇՈՏ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Գիտելիքի հասարակության զարգացման արդի ժամանակաշրջանում դեմոկրատիայի իշխանակարգային և վարչակարգային համեմատական վերլուծություններն ունեն առանցքային նշանակություն: Ժողովրդավարության համակարգի կառուցվածքային-գործառական հիմնախնդիրների համեմատական քաղաքագիտական վերլուծությունը հնարավորություն է տալիս փաստելու քաղաքացիավարական ժողովրդաիշխանության ընթացակարգերի կարևորությունը: Դրանք պայմանավորված են դեմոկրատիայի արդյունավետության, որակի, արդիականացման, ռացիոնալության, քաղաքացիավարության, կայունության, արժեքային, մշակութային, ներերկրային և միջերկրային ինդեքսների բազմաթիվ այլ չափումներով:

Ժողովրդաիշխանության քաղաքացիավարության բաղադրիչների ամբողջական դիտարկմամբ մասամբ հարստացվում է ցիվիլիարխիայի տեսության կատեգորիալ ապարատը: Չնայած ժողովրդավարական իշխանակարգերի և վարչակարգերի կայացման հիմախնդիրների համեմատական վերլուծություններին՝ այնուամենայնիվ դեմոկրատագետները չկարողացան համաձայնության գալ մի շարք կարևոր հարցերի շուրջ: Դեմոկրատիայի հայեցակարգերում և դասակարգումներում դեռևս անհասկանալի են մնում բազմաթիվ հիմնախնդիրներ: Դրանցից են անազատական ժողովրդավարական այնպիսի մոտեցումները, որոնք պայմանավորված են հակաժողովրդավարական, ոչ ժողովրդավարական, մինչժողովրդավարական, կիսաժողովրդավարական, խառնածին (հիբրիդային) ժողովրդավարական և հետժողովրդավարական ընթացակարգերով: Ընդ որում, դեմոկրատիայի կառուցվածքային-գործառական բաղկացուցիչ տարրերի շարքում դիտարկվում են այնպիսի հարցադրումներ, որոնցից են՝ 1) արդյո՞ք դեմոկրատիան բացարձակ արժեք է, 2) արդյո՞ք դեմոկրատիան համընդհանուր քաղաքակրթական երևույթ է, 3) արդյո՞ք դեմոկրատական ընթացակարգերը սոցիալ-քաղաքական ավանդույթների ու քաղաքացիական մշակույթի արգասիք են, 4) արդյո՞ք դեմոկրատիան հասարակության կառավարման, ինքնակառավարման և մրցակցության կազմակերպման եղանակ է[1]:

[1] Ավելի մանրամասն տե՛ս **R. A. Dahl**, On Democracy. Yale University Press, 2000, էջ 35-62, **R. A. Dahl**, On Political Equality. Yale University Press, 2007, էջ 50-77, **J. Habermas**, Strukturwandel der Öffentlichkeit. Untersuchungen zu einer Kategorie der bürgerlichen

Գծապատկեր 1

Դեմոկրատիայի «եռանկյունին»



Վերոհիշյալ հարցերի պարզաբանման նպատակով մշակված է դեմոկրատիայի «եռանկյունին», որը ցույց է տալիս ժողովրդաիշխանության և ժողովրդավարության հարաբերակցությունը (տե՛ս գծապատկեր 1): Գծապատկեր 1-ից երևում է, որ դեմոկրատիան ներառում է ժողովրդաիշխանությունը և ժողովրդավարությունը (կառուցակարգեր, ընթացակարգեր): Դեմոկրատիան որպես ժողովրդաիշխանություն նշանակում է, որ իշխանությունը պատկանում է ժողովրդին, և այն իրականացնում է ազատ ընտրությունների ու հանրաքվեների, պետական իշխանության ու ՏԻՄ-երի միջոցով: Սակայն մյուս կողմից դեմոկրատիան որպես ժողովրդավարություն նշանակում է, որ պետական իշխանությունը և ՏԻՄ-երն այն իրականացնում են սահմանադրությանը, օրենքներին և իրավական ակտերին համապատասխան: Ընդ որում, «փոխադարձ զսպումների և հակակշիռների» համակարգն ապահովում են հանրային ծառայությունը, պաշտոնատար անձինք, կուսակցությունները, ՀԿ-ները, ԶԼՄ-ները, արհմիությունները, կրոնական կազմակերպությունները, քաղաքացիական շարժումները և քաղաքականության այլ դերա-

---

Gesellschaft. Frankfurt am Main, 1990, էջ 58-80, 122-130, **J. Habermas**, Zur Verfassung Europas: Ein Essay. Frankfurt am Main, 2011, էջ 13-37, **M. McFaul**, The Fourth Wave of Democracy and Dictatorship: Noncooperative Transitions in the Postcommunist World // World Politics, Vol. 54, Issue 2 (January) 2002, էջ 212-244, **G. O'Donnell**, Dissonances: Democratic Critiques of Democracy. University of Notre Dame Press, 2007, էջ 1-25, **P. C. Schmitter**, The ambiguous virtues of accountability // Journal of Democracy, 15 (4), 2004, էջ 47-60, **A. Przeworski**, Democracy and the Market: Political and Economic Reforms in Eastern Europe and Latin America. Cambridge University Press, 1991, էջ 26-34 և ուրիշներ:

կատարները: Այս առումով կարևոր նշանակություն ունեն «փոխադարձ զսպումների և հակակշիռների» համակարգի արդյունավետությունն ապահովող սուբյեկտների քաղաքական մշակույթը, արժեքները, ավանդույթները, գիտակցությունը և այլն: Դեմոկրատիայի «եռանկյունին» ցույց է տալիս, որ հասարակական հիմնախնդիրների առաջացման պատճառը «ժողովրդաիշխանության» և «ժողովրդավարության» միջև առկա անհամապատասխանությունն է, որը դրսևորվում է քաղաքականության սուբյեկտների գործունեության մեջ, և որը կարող է հանգել նաև բախումների: Նման դեպքում տեղի է ունենում դեմոկրատիայի «երկատում» (դիխոտոմիա)[2]՝ ձևավորելով «դիխոտոմիկ դեմոկրատիա»: Այսինքն՝ ժողովրդավարությունը չի համապատասխանում ժողովրդաիշխանությանը, կամ՝ հակառակը: Օրինակ՝ թեև հետխորհրդային երկրների սահմանադրություններում[3] ամրագրված են ժողովրդաիշխանության ընթացակարգերը, սակայն ժողովրդավարության մակարդակում հանդիպում են մի շարք դժվարությունների, որոնք դրսևորվում են քաղաքացիական անհնազանդությունների, հեղափոխությունների, անգամ իսկ զինված ընդհարումների տեսքով: Այս համատեքստում «ժողովրդավարությունը» կարող ենք *սահմանել որպես ժողովրդաիշխանության գործառման եղանակ (մակարդակ, աստիճան), իսկ ժողովրդաիշխանությունը՝ ժողովրդավարության որակ:*

Դեմոկրատիայի «եռանկյունին» ցույց է տալիս նաև, որ դեմոկրատիան դիխոտոմիկ է (դեմոկրատական դիխոտոմիա), քանզի այն այնպիսի կարգ է (իշխանակարգ, վարչակարգ), որի լեգիտիմ և լեգալ կրողներն ու իրականացնողներն իշխանությունն ու ՏԻՄ-երն են, իսկ քաղաքացիական հասարակությունը հանդես է գալիս որպես ազդեցիկ և վերահսկող միավորումների ցանց: Սահմանադրությամբ, օրենքներով և իրավական այլ ակտերով ամրագրված նորմերը և ընթացակարգերը կարգավորում են պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների գործառույթները՝ նպաստելով ժողովրդավարական լեգիտիմության ամրապնդմանը[4], հանրային իշխանության քաղա-

---

[2] Այդ մասին տե՛ս **Collier D., Adcock R.**, Democracy and dichotomies: a pragmatic approach to choices about concepts // Annual Review of Political Science 1999, № 2, էջ 537-565, **Bogaards M.**, Where to draw the line? From degree to dichotomy in measures of democracy // Democratization, 2012, № 19 (4), էջ 690-712, **Mansbridge J. J.**, Beyond Adversary Democracy. N.Y.: University of Chicago Press, 1983, էջ 3-20, **Харитонова О. Г.** Политические режимы и режимные изменения в зеркале научного дискурса // "Вестник РУДН". Политология. 2017, Т. 19, № 4, էջ 379-391:

[3] Տե՛ս «ՀՀ Սահմանադրություն» (հոդված 2) // https://www.president.am/hy/ constitution-2015 (վերջին մուտք՝ 11.05.2019), «Конституция РФ» (ст. 3) // http://www. constitution.ru (վերջին մուտք՝ 11.05.2019), «Конституция РБ» (ст. 3) // http://house. gov.by/ ru/konstitutsija-respubliki-belarus-ru (վերջին մուտք՝ 11.05.2019), «Конституція України» (ст. 5) // http://www. president.gov. ua/ua/documents/constitution/konstituciya-ukrayini-rozdil-i (վերջին մուտք՝ 11.05.2019), Конституция РК (с. 3) // http://www.akorda. kz/ru/official_documents/constitution (վերջին մուտք՝ 11.05.2019):

[4] Մանրամասն տե՛ս **Эйзенштадт Ш. Н.** Парадокс демократических режимов:

քացիավարական ընթացակարգերի, «քաղաքացիական ազգի» և «քաղաքացիական պետության» կայացմանը, քաղաքացիավարական մեծամասնության և փոքրամասնության կամքի ձևավորմանը: Այդ հիմնահարցերի համակողմանի քննարկման համար էական նշանակություն ունի սահմանադրահիրավական ժողովրդավարության տեսությունը[5]: Ըստ դրա՝ քաղաքացիակենտրոն (հասարակաբար) կառավարման քաղաքացիավարական վստահությունը և լեգիտիմությունը քաղաքական կապիտալի բաղկացուցիչ տարրեր են: Այս առումով քաղաքական համակարգի քաղաքացիավարական կայունությունը կախված է դրա լեգիտիմությունից ու արդյունավետությունից: Ըստ ամենայնի, լեգիտիմությունն ու կառավարելու կարողություններն ունեն հավասարազոր նշանակություն, որովհետև լեգիտիմության ճգնաժամն այնպիսի իրավիճակ է, որում քաղաքական ինստիտուտների նկատմամբ անվստահությունը կասկածի տակ է դնում հենց դրանց գոյությունը:

Դեմոկրատիային բնորոշ են ցիվիլիարխիկ քաղաքական համակարգը, վարչակարգը, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման կառուցակարգերը, կուսակցությունները, քաղաքացիական հասարակության կազմակերպությունները և այլն: Դեմոկրատիայի գոյությամբ է պայմանավորված նաև ցիվիլիթեայի գոյությունը, որովհետև դեմոկրատական մասնակցությունը և ներկայացվածությունը, քաղաքական որոշումների ընդունումն ու իրականացումը մարդու քաղաքացիավարական իրավունքներից ու ազատություններից են: Այս առումով դեմոկրատիան դիտարկվում է քաղաքակիրթ կառավարման և ինքնակառավարման ձև, քաղաքակրթություն, մարդասիրություն, մարդկային կապիտալ, կյանքի որակ, բարեվարքություն, կայուն զարգացում, իրավունքի գերակայություն և այլ եզրույթների միասնության մեջ:

Ցիվիլիարխիկ դեմոկրատիան արտացոլում է դեմոկրատիայի գործընթացի և արդյունքի փոխլրացուցչությունն ու անքակտելիությունը: Այն համաշխարհային և ներազգային քաղաքական համակարգերում դրսևորվում է նաև որպես քաղաքակրթակենտրոն (ցիվիլիցենտրիկ) առանցք: Անհնար է պատկերացնել դեմոկրատիան, դեմոկրատացումը, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության ներպետական և միջազգային ընթացակարգերն առանց ցիվիլիարխիզմի: Այն ժողովրդի քաղաքակրթակենտրոն և քաղաքացիակենտրոն իշ-

---

хрупкость и изменяемость (I) // "Полис. Политические исследования", 2002, № 2, էջ 67-81, **A. Karatnycky**, Ukraine's Orange Revolution // Foreign Affairs, Vol. 84, № 2 (Mar.-Apr.), 2005, էջ 35-52, **J. Katz, G. King**, A Statistical Model for Multiparty Electoral Data // American Political Science Review, Vol. 93, № 1, 1999, էջ 15-32, **J. J. Linz, A. Stepan**, Problems of Democratic Transition and Consolidation: Southern Europe, South America, and Post-Communist Europe. Johns Hopkins University Press, 1996, էջ 3-16 և ուրիշներ:

[5] Այդ մասին տե՛ս **Меркель В., Круассан А.** Формальные и неформальные институты в дефектных демократиях (I) // "Полис. Политические исследования", 2002, № 1, էջ 6-17, **Меркель В., Круассан А.** Формальные и неформальные институты в дефектных демократиях (II) // "Полис. Политические исследования", 2002, № 2, էջ 20-30:

խանությունն է, կառավարումն ու ինքնակառավարումը, որը ժողովուրդն իրականացնում է քաղաքացիավարական մասնակցությամբ՝ հանուն կայուն զարգացման և կյանքի որակի բարելավման: Քաղաքացիավարական ժողովրդաիշխանության կայացման նպատակն է ապահովել ժողովրդավարական բարեփոխումների գործընթացը, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, ՔՀԿ-ների և քաղաքական համակարգի մյուս ինստիտուտների կայուն գործառումը և զարգացումը: Այդ նոր տիպի իշխանության կայացման նախադրյալները դրսևորվում են մարդու քաղաքական, տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների ու ազատությունների պաշտպանության ներպետական և միջազգային ընթացակարգերի ներդաշնակեցման գործընթացում:

Քաղաքական մտքի զարգացման և հասարակական քաղաքակրթական առաջընթացի առանձնահատկություններով պայմանավորված դեմոկրատիան՝ որպես գիտական հասկացություն ու քաղաքացիավարական երևույթ, ունեցել է առանցքային նշանակություն: Ցարդ հասարակության քաղաքական համակարգերի կառուցվածքային-գործառական կայունության, պետական իշխանության լեգիտիմության, օրենքի գերակայության, քաղաքացիական հասարակության, մարդու իրավունքների ու ազատությունների պաշտպանության ներպետական և միջազգային ընթացակարգերի կայացման պայմաններում զգալի է տարբեր դարաշրջանների ժողովրդավարության տեսությունների, հայեցակարգերի և համեմատական ուսումնասիրությունների հրատապությունը:

Գծապատկեր 2

«Դեմոկրատիա» և «ցիվիլիկրատիա», «դեմարխիա» և «ցիվիլիարխիա» հասկացությունների հարաբերակցությունը



Ինչպես երևում է գծապատկեր 2-ից, «դեմոկրատիա» և «դեմարխիա» հասկացությունների ծավալներն ավելի լայն են, քան «ցիվիլիկրատիան» և «ցիվիլիարխիան»: Դա նշանակում է, որ դեմոկրատիան

ներառում է ցիվիլիկրատիան, իսկ դեմարխիան՝ ցիվիլիարխիան:

Միշտ չէ, որ նույնիսկ հասարակության անդամների քաղաքական ակտիվությունը, նախընտրական, ընտրական ու ետընտրական գործընթացներին զանգվածային կամ ոչ զանգվածային մասնակցությունը կարող են արդյունավետ երաշխիքներ ստեղծել դեմոկրատիայի համար: Դրանք կարող են նաև վտանգել ոչ միայն ժողովրդաիշխանությունն ու ժողովրդավարությունը, այլև քաղաքացիական հասարակությունը, օրենքի գերակայությունը, սահմանադրականությունը և այն ամենը, ինչը երաշխավորում է մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանությունը: Մարդկային քաղաքակրթության զարգացման արդի փուլում մշտապես կատարելագործվում են ժողովրդավարական քաղաքական համակարգի և վարչակարգի գործառման ընթացակարգերը, կառուցակցվում են քաղաքացիակենտրոն կառավարման մոդելները: Ակնհայտ է, որ դեմոկրատական արդյունավետությունը, կառուցողականությունը և ռացիոնալիզմը պետք է համալրված լինեն քաղաքացիակենտրոնության և ցիվիլիարխիկ ընթացակարգերով: Այս առումով ՀՀ-ում քաղաքացիավարական ժողովրդաիշխանության կայացման քաղաքագիտական ուսումնասիրությունը բացահայտում է, որ խորհրդարանական կուսակցությունների, ՀԿ-ների, արհեստակցական միությունների, քաղաքացիական ժուռնալիստիկայի և կանանց քաղաքական ներկայացուցչության ընթացակարգերի հետևողական զարգացումը ոչ միայն նպատակահարմար է, այլև ներկա պայմաններում դարձել է պատմական անհրաժեշտություն: Քանզի Հայաստանի և հետխորհրդային մյուս երկրների ժողովրդավարության մակարդակների վրա ազդում են ոչ միայն քաղաքական, այլև տնտեսական, սոցիալական, գիտակրթական և առողջապահական գործոններն ու դրանց բաղկացուցիչ տարրերը: Դրանց փոխպայմանավորվածությունը ազդում է խնդրո առարկա երկրների քաղաքական համակարգերի ժողովրդավարացման դրական, բացասական կամ չեզոք միտումների վրա՝ ձևավորելով քաղաքացիավարությանն անցման ինքնատիպ մոդելներ:

Գծապատկեր 3-ից երևում է, որ քաղաքացիավարությունը և քաղաքացիաիշխանությունը պետության և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների միջև երկխոսությամբ և գործընկերությամբ պայմանավորված ընթացակարգերի ամբողջությունն են: Այն ցույց է տալիս քաղաքացիավարության և քաղաքացիաիշխանության կայացման մակարդակը և տվյալ մակարդակին բնորոշ երկխոսության և գործընկերության միտումները: Վերջիններս էլ համապատասխանում են ցիվիլիարխիայի սկզբնական և բարձր զարգացման մակարդակներին: Դրանք հնարավորություն են տալիս նաև դիտարկելու ցիվիլիարխիկ գործընկերության մշակույթը՝ հաշվի առնելով հետխորհրդային տարածքում ընթացող քաղաքական գործընթացների բախումնածին չափումները: Ի մասնավորի, հետխորհրդային ժողովրդաիշխա-

նությունների կայացման նախադրյալները հանդես են գալիս որպես քաղաքացիավարական նոր գործոններ, որոնք ունեն դրսևորման որոշակի առանձնահատկություններ այդ երկրների ՔՀԿ-ների համակարգում: Վերջիններիս գործունեության վերլուծությունը հանգեցնում է այն համոզման, որ դրանց միջև և դրանց հետ համագործակցության խորացումը կարևոր պայման է քաղաքական կայունության ամրապնդման: Ընդ որում, այդ երկրներից յուրաքանչյուրն ունի քաղաքական համակարգի և վարչակարգի, հանրային կառավարման և քաղաքացիական հասարակության առանցքային կազմակերպությունների միջև փոխհարաբերության ազգային օրակարգերը:

Գծապատկեր 3

Քաղաքացիավարության և քաղաքացիահիշխանության մակարդակները



XXI դարի համաշխարհային մարտահրավերները քաղաքակրթական սպառնալիք են դառնում քաղաքացիավարական ժողովրդահիշխանությունների առաջընթացի համար՝ վտանգելով դրա քաղաքական, սոցիալական, տնտեսական և հոգևոր-մշակութային հիմքերը: Նոր մարտահրավերներն ու սպառնալիքները պահանջում են քաղաքացիավարական համարժեք լուծումներ, որոնք կհանգեցնեն մարդակենտրոն գործոնների հզորացմանը և մարդկային ներուժի զարգացմանը: Քաղաքացիավարական ժողովրդահիշխանության համատեքստում հետխորհրդային երկրների կայուն զարգացման և ինստիտուցիոնալ բարեփոխումների արդյունավետության բարձրացման տեսանկյունից

արդիական են օրենքի գերակայության, կոռուպցիայի դեմ պայքարի, քաղաքական պատասխանատվության, քաղաքացիական լրագրության և կրթության, իրական աշխատավարձի բարձրացման, գործազրկության և աղքատության մակարդակի նվազեցման, կրթության և առողջապահության ոլորտներում պետական ծախսերի ավելացման և այլ գործոնները, ինչպես նաև դրանցից բխող ռազմավարական լուծումների իրավական ամրագրումն ու քաղաքացիավարական մշակույթի ձևավորումը: Զգալի են հետխորհրդային տարածքում քաղաքացիավարական ժողովրդաիշխանության ամրապնդմանն աջակցելու ՄԱԿ-ի, ԵԽ-ի, ԵԱՀԿ-ի և ԵՄ-ի ծրագրերը:

Այսպիսով, յուրաքանչյուր կայացած քաղաքացիավարական երկրի հիմքը ժողովրդաիշխանական համակարգը և ժողովրդավարական վարչակարգն են, որոնք ազգային շահերի համարժեք արդիականացման միջոցով նպաստում են պետության և հասարակության քաղաքացիական ինստիտուցիոնալացմանը: Վերջինս էլ իր հերթին ենթադրում է պետության, քաղաքացիական հասարակության և անհատի միջև քաղաքացիավարական երկխոսության և գործընկերության ձևավորում, որը կարող է նպաստել տվյալ երկրի քաղաքական, տնտեսական, սոցիալական և մշակութային առաջընթացին:

Ժամանակակից պայմաններում դեմոկրատիայի և ցիվիլիարխիայի քաղաքական, տնտեսական, սոցիալական և մշակութային փոխակերպումների հետևանքով զարգացած և զարգացող երկրներում առաջանում են նոր իրավիճակներ և երևույթներ, որոնց բնորոշման հարցում քաղաքագիտության մեջ ցարդ զգալի է լուրջ բաց: Այս համատեքստում խիստ կարևորվում է դեմոկրատիայի ցիվիլիարխիկ չափումների և ժամանակակից միտումների որոշարկումը: Քանզի գիտելիքի հասարակության դարաշրջանում քաղաքական, սոցիալ-տնտեսական, մշակութային և գիտակրթական գործընթացները մի կողմից նպաստում են զարգացող և հետխորհրդային երկրների ժողովրդավարացման գործընթացին, մյուս կողմից՝ պատճառ դառնում քաղաքացիավարական անկայունությունների, ոչ քաղաքացիավարական և հակաքաղաքացիավարական վարչակարգերի ձևավորման:

Բանալի բառեր – *դեմոկրատիա, դեմարխիա, ցիվիլիկրատիա, ցիվիլիարխիա, երկխոսություն, գործընկերություն, զարգացում, մարդու իրավունքներ և ազատություններ, դիխոտոմիա, քաղաքակրթակենտրոն, քաղաքացիակենտրոն*

АШОТ АЛЕКСАНЯН – ***О цивилиархическом измерении демократии***. – В статье выявляются особенности цивилиологического подхода, а также значение режимных и властных ресурсов для рационального конструирования диалога и партнёрства между государством и организациями гражданского общества. На основе концепции современной демократии анализируются важные факторы прав и свобод человека, индивидуализма, верховенства закона, конституционализма и либерализма. По-новому определено понятие “цивилиархическая демократия”,

объяснены её специфические черты и ценности. Утверждается, что эффективность, конструктивность и цивилицентричность демократиии как власти народа и политического режима вырастает из цивилиархических механизмов и институтов.

Ключевые слова: *демархия, цивиликратия, цивилиархия, диалог, партнёрство, развитие, права и свободы человека, дихотомия, гражданоцентричность, цивилицентричность*

ASHOT ALEKSANYAN – ***On the Civiliarchic Dimension of Democracy***. – The article examines the issues of the civiliarchic dimension of democracy, identifies the features of the civiliological approach, as well as the importance of regime and power resources for the rational design of the dialogue and partnership between the state and civil society organizations. Based on the concept of modern democracy, important factors of human rights and freedoms, individualism, the rule of law, constitutionalism and liberalism are analyzed, a new definition of the concept of "civiliarchic democracy" is given, its specific features and values are explained. It is argued that the effectiveness, constructiveness and civilicentricity of democracy as the power of the people and as a political regime is realizable based on a civiliarchical mechanism and institutions.

Key words: *democracy, demarchy, civilicracy, civiliarchy, dialogue, partnership, development, human rights and freedoms, dichotomy, citizen-centric, civilicentric*

Ներկայացվել է՝ 27.05.2019
Գրախոսվել է՝ 02.07.2019
Ընդունվել է տպագրության՝ 12.07.2019